


Հ. Ա. Խ. Հ. ԼՈՒԳՈՂԿՈՒՄԱՏԻ ԴՊՐՈՎԱԿԱՆ ՎԱՐՉՈՒՅՑՈՒՆ
ՄԵԹՈԴՈՒՄՈՒՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՇԻԿ

Ի Ն Զ Պ Ե Ս
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԴԱՄԻՆ

ՊԵՏՐՈՎ

1934



Հ. Ս. Խ. Զ. ԼՈՒԿՈՎՈՂՎՈՎԱՆԻ ԴՊՐՈՎԱԿԱՆ ՎԱՐՉՈՎԵՑՈՒ
ԱՐԵՎՈՎՈՎՈՎԱՆ, ԳՐԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.


371.3

6119

ՀՈՒՐԴԻԿ

Ի Ա Զ Պ Ե Ս

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՎԵԼ, ԴԱՍԻՆ



Ա Ե Տ Ս Ա Կ Ա Խ Հ Ր Ա Տ Ո Ծ Ա Կ Գ Շ Ո Ւ Յ Ա Ը Ն Ի Վ Ա Ը Ն Ի Վ

Digitized by srujanika@gmail.com

1934

Տեխու. Խմբագիր՝ Տ. Առաջանցյան
Լեզվական Խմբագիր՝ Ա. Առաջանցյան
Սըբադրիչ՝ Գար. Հակոբյան

Դասգիր. № 8700, հրատ. № 3124, ուշագիր. № 1422, տիրամ 1000
Գևահքամի տպարան, Ցեղանք, Ա Քենչար. № 3-

1. ԽՌՉ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԴԱՍԻՆ

Ուսումնականարակչական պրոցեսի ամենահիմնական ողակը դասն է: Մը հաջող ընթացքից և կախված ուսումնականարակչական աշխատանքի արտադրողականության բարձրացումը:

Դասի հաջողությունը գերազանցապես կախված է ուսուցչից: Այս աեսակեաից չափազանց մեծանում է ուսուցչի գերը: Համեմ (ը)կ կենտկոմն ոգոստոսի 25-ի իր հալանի վորոշման մեջ հատկապես նշում եւ ռուսուցչի ակտիվության զգալի աճումը և աշխատանքի համար նրա ունեցած պատասխանատվության ավելանալը վերջին տարիների ընթացքում... Նրա հարանուն գերը յերեխաներին գիտությունների հիմունքները յօւրացնել տալու, նրանց մեջ գիտակցական կարգապահության և ուսմանն ու աշխատանքին կոմունիտատական վերաբերմունք դաստիարակելու ասպարիզում»:

Ուսուցչի բարեխիղճ և լուրջ վերաբերմունքի կարեւագոր ցուցանիշը լավ նախապատրաստությամբ դասարան մանելն է, այսինքն ուսուցիչն ամեն որ պետք է իր ձեռքի տակ ունենա որվա աշխատանքի մեթուգապես մշակված գրավոր պլան և ապահոված լինի դասի հաջող անցկացման բոլոր միջոցառումները: Մինչդեռ քիչ չեն այն դեպքերը, յերբ ուսուցիչը դասարան և մանում առանց տվյալ դասի համար նա-

խապատրաստված լինելու, չի իմանում ալդ որվա իր
կոնկրետ անելիքը, նախորոք նշած չի լինում դասի
նպատակը և այդ նպատակին հասնելու միջոցները:
Ահա թե ինչու միանգամայն իրավամբ նման դասերը
կարելի յե անվանել ինքնահոսի մտտնված դասեր:

Ալդիսի դասերը, նույնիսկ այն դեպքերում, իերք
ուսուցիչը փորձված ու շնորհալի յե, շատ քիչ ար-
դյունք են տալիս սիստեմավորված և խորացած դի-
տելիքների լուրացման տեսակետից:

2. ԻՆՉՊԵՍ ԶԳԵՏՔ Ե ՆԱԽԱՎԱՏՐԱԾՏՎԵԼ ԴԱՄԻՆ

Յերբեմն ուսուցիչները դասի նախապատրաստում
ևն համարում այն, վոր առաջուց միայն ընտրած են
լինում անցնելիք նյութը. այդ ճիշտ չե.

Ուսուցիչն անպայման պետք ե նախատեսի
անցնելիք նյութը, սակայն կարևորն այն ե, թե նա
բնչղես պետք ե անցնի նախատեսված նյութը, թնչ
միջոցներ, մեթոդներ և դորժադրելու, դիզականիկական
բնչ նյութեր և ողտագործելու, վորպեսզի կարողանա
նելու ու հիմնովին լուրացնել առաջ տվյալ որվա նյութը:

Ճիշտ չե նույնպես, իերք դասի նախապատրաստ-
ման անվան տակ գրի յե առնում դասի ամբողջ ըն-
թացքը՝ սկզբից մինչեւ վերջը, հարց ու պատասխանի
ձևով։ Սա նույնպես չի նշում, թե ինչ միջոցներով
պետք ե նյութը լուրացնել առաջ մինչեւ դասի նա-
խապատրաստման հիմնական նպատակն այդ և լի-
նելու։

Եսու դեպքերում ել, վորը շատ առածված ե մեղ-

նում, ուսուցիչներն իրենց ձեռքի տակ ունենում են այսպես կոչված, «զասի կոնսպեկտ», վորտեղ՝ նշված ե լինում որվա նյութի քիչ թե շատ մանրամասն բավանդակությունը. այլ կերպ ասած, անցնելիք նյութը վեր և ածում կետերի, լերբեմն ել՝ նույնիսկ խտացրած թեղիսների։ Սահատկապես նրա համար և, վոր ուսուցիչը հիշի, թե ինչ հաջորդականությամբ և ինքը պատմելու, նման լերեութները գերազանցապես պատահում են այն դեպքերում, յերբ թեման կապված ե լինում պատմելու հետ (պատմություն, հասարակագիտություն, ընագիտություն, աշխարհագրություն և այլն)։ Սա իրոք վոր կոնսպեկտ է, բայց վճռ մեթոդապես մշակված դասի գրավոր պլան։ Այն, ինչ ուսուցիչը պատմելու լեռ դասին, կարող և իրեն համար կոնսպեկտի ձևով մի առանձին թղթի վրա կամ տետրում կազմել, վորպեսզի հիշի անցնելիք նյութի հաջորդականությունը. դա իր գործն է։ Սակայն մեր խոսքը վերաբերում և ինչ յիշ ինչպես տեսնելուն։ Սա յենք համարում դասի նախապատրաստում. մայս և, վոր, վորպես անճըռաժնշտ պահանջ, դըրված և մեր ուսուցչություն առաջ. Այլ կերպ չի կարելի պատկերացնել դասի ուսցիոնալ կազմակերպումը։

ՅԱՍԻ ՃԻՇՏ ՆԱԽԱԳԱՑՐԱՌՈՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՆՏ ԴՈՒՇՈՒՆՆԵՐԸ

Դասաւուն պետք և աիրավետի Մարքս-Լենինյան մեթոդոգիային, ծանոթ լինի Մարքս-Լենինյան մանկավարժության տեսական ու գործն և կան խնդիրներին։ Առանց սրանց ուսուցիչը վոչ մի ալ դրանավեա-

քայլ չի կարող անել իր ամենորդա գործնական աջախատանքներում:

Մանկավարժական պրոցեսը գիտական հիմքերի վրա դնելու տեսակետից կարևոր դեր են կատարում մանկարանությունը և հոգեբանությունը, վորոնք ուսուցչին հնարավորություն են տալիս գիտենալու լերեխաների տարիքալին ու անհատական առանձնահատկությունները և դրանով մանկավարժին գործնականում զինում ճիշտ կառուցելու մանկավարժական պրոցեսը:

Այս բոլորից պարզ ե, թե վիրքան ուշադիր ու բարեխիղճ պետք ե լինի խօրհրդային ուսուցիչը վերոհիշյալ դիտություններն ուսումնակրելու, նրանց մեջ խորանալու և նրանց կապակցությամբ յերեխաների դաստիարակման գործը ճիշտ հունի մեջ դնելու տեսակետից:

Միանդամայն սխալ և մնասակար ե այն տեսակետը, թե ուսուցիչ լինելու համար հարկավոր ե միայն բնական շնորհ, տաղանդ և ալլու: Ի՞նչ խոսք վոր առանց լուրջ գիտական, քաղաքական, մանկավարժական մեթոդական պատրաստության, հնարավոր չե կատարել մեր դպրոցին և ուսուցչին առաջադրված չափաղանց լուրջ և պատասխանառու խնդիրները: Ուստի ուսուցիչը պետք ե շարունակ վորակավորվի, բարձրացնի իր տեսական մակարդակը, իր մանկավարժական մեթոդական վորակը, տիրապետի իր աշխատանքի բնագավառի տեխնիկային:

4. ԴԱՍԻ ՆԱԽԱԳԱՏՐԱԾՄԱՆ ՆԱԽԱԳԱՑՄԱՆՆԵՐԸ

Յելնելով վերը նշված բոլոր խնդիրներից, անհրաժեշտ և նշել, վոր, դասի հաջող նախապատրաստման

համար, մանկավարժը պետք և ամենից առաջ ինքը տիրապետի այն նյութին ու դիտելիքներին, վոր պետք և հաղորդի յերեխաներին, և այն մեթոգական պրիոններին ու ուսումնական աշխատանքի կազմակերպման տեխնիկային, վորոնց միջոցով պետք և կատարվի դասավանդումը:

Վերջին խնդիրը կապված և հետեւալ հարցերի հետ,

ա) լերեխաների տարիքալին և անհատական առանձնահատկությունները՝ նրանց պատրաստության տուրիճանը.

բ) անցնելիք նյութի բնույթն ու չափը.

գ) տեխնիկական հարմարությունները և ուսումնա-ուժանդակ ձեռնարկների խնդիրը.

դ) տվյալ նյութին տրամադրելիք ժամանակը:

Դասի նախապատրաստման աշխատանքի ժամանակը ուսուցիչը պետք և նկատի ունենա, վոր տվյալ ակադեմիկան ժամը սերտորեն կապված և իր նախորդ և հաջորդ ժամերի հետ. տվյալ դիսցիպլինի բոլոր ժամերը կազմում են առանձին ողակները մի ամբողջական շղթայի, տվյալ առարկայի վողջ ծրագրի:

Ալտերդից պարզ ե, վոր դասի նախապատրաստությունն ուժեղ կերպով կապված և առարկայի ամբողջ ծրագրի հետ. Այս տեսակետից ուսուցիչը պետք և ամբողջ տարվա ընթացքում շարունակարար նախապատրաստվի: Նախապատրաստման այս պրոցեսը պետք և կատարվի հետեւալ կերպ.

ա. տարվա սկզբին ամբողջ նյութի պլանավորում ամբողջ տարվա համար: Ուսուցիչը տարվա ընթացքում պետք և տևականորեն և սիստեմատիկաբար նախապատրաստվի,

բ) քառորդային*) պլանավորում և անցնելիք նկութի տեսական նախապատրակառում ու մշակում.

գ) կոնկրետ տվյալ որովա, տվյալ դասի պլանավորումնախապատրակառում.

Տարեկան տեսական նախապատրակառումը տեղի է ունենում ամբողջ տարեկան պլանի կատարման ընթացքում. սա այն գործնական նշանակությունն ունի, վոր ուսուցիչը, մանրազնին կերպով ուսումնասիրելով իր առարկայի ծրագրերը՝ շարունակ աշխատում և ձեռք բերել ու լուրացնել իր նկութի հետ կապված նորությունները—համապատասխան գրականություն, մեթոդիկայի վերաբերյալ նյութեր, նոր դրույթներ, պարբերականներից ու այլ համապատասխան գրականությունից ծանոթություն իր առարկայի վերաբերյալ վերջին խոսքին, մասնակցում և համապատասխան պարապմունքների, հաճախում և զեկուցումների, դասախոսությունների և այլն։ Այս կերպ ուսուցիչը գտնվում և շարունակական վորակավորման պրոցեսում։ Նա աստիճանաբար տիրապետում և իր նյութին և ավելի խօսքանում նրա մեջ։

Քառորդային պլանավորման ժամանակ նշվում են տվյալ քառորդի ընթացքում անցնելիք գիտելիքների թեմաները, նրանց արամազդրելիք ժամերը և անհրաժեշտ ոժանդակ պիտույքները։ Քառորդային պլանավորման հիման վրա ուսուցիչն առանձնապես աշխատում և տվյալ քառորդում անցնելիք նկութի մշակման, նախապատրակառման վրա։

Վերջապես տվյալ դասի նախապատրակառումը շատ տվելի լե կոնկրետացնում ուսուցչի աշխատանքը։ Նա

*.) Ուսման տարին բաժանվում և չորս քառորդի

նախատեսում ե կոնկրետ աշխատանք, թեմա և մանկավարժական համապատասխան միջոցներ գործադրելով՝ նախապատրաստում բոլոր պարմանները, վորպեսզի աշակերանները կատարեն տվյալ աշխատանքը, մշակեն ու յուրացնեն տվյալ թեման, յենելով կոնկրետ սպամաններից, հնարավորություններից, տվյալ խմբի աշակերտության պատրաստության չափից:

5. ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Այժմ տեսնենք, թե ինչպես պետք ե նախապատրաստել դասը, վորպեսզի վերը դրված նպատակը՝ ավյալ աշխատանքի կատարումը, նյութի մշակումն ու յուրացումն աշակերտության կողմից ըստ ամենայնի կինսագործվի:

Դասի պլանավորումը՝ պետք ե անցնի հետևյալ եռապներով.

Ա. ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ

Ամենից առաջ, յենելով կայուն ծրագրից, պետք ե նշել հերթական անցնելիք աշխատանքը, նյութը, թեման, վորը պետք ե դառնա տվյալ դասի որյեկտը: Դրա հետ անմիջապես կապված նշվում են այն հատուկ խնդիրները, նպատակը, վորոնց պետք ե համանել տվյալ աշխատանքը կատարելու, թեման մշակելու հետևանքով, այսինքն՝ ինչ նորույթներ ու գիտելիքներ են ստանալու այդ դասին աշակերտները: Յերբեք չպետք ե մտնել դասարան, առանց դասի կոնկրետ նպատակը պարզուցելու: Յեթն թեման մեծ և մեկ ակադեմիական ժամանակակից ժամում հնարավոր չե սպառել, այդ դեպքում պետք ե նախատեսել, թե հատկապես տվյալ ժա-

մին վո՞րեան պետք ե անցնել, և վո՞րն ե լինելու այն
հիմնականը, վորի վրա պետք ե կենտրոնացնել աշա-
կերտության ուղաղը ությունը:

Բ. ՆԱԽՈՐԴԻ ԴԱՍԵՐԻՑ ՈԳՏԱԳՈՐԾԵԼԻ ՆՅՈՒԹԵՐ

Բացի դրանից, պետք ե նախատեսել նաև, թե նա-
խորդ դասերից ինչ տարրեր ե հնարավոր ոգտագործել
տվյալ դասին՝ իբրև կրկնությանը և ընտրված թեմայի-
լուրացմանն ոժանդակող նյութ. սրանով դասը կկա-
տարի յերկու դեր—մի կողմից հճանդիսանա աշակեր-
տությանը նորույթներ տվող, իսկ մյուս կողմից՝
անցած նյութերը խորացնող ու ամբացնող միջոց: Այս
կերպ դասն ինքնին կկապվի նախորդ և հաջորդ դա-
սերի հետ և, վոր կարևորն ե, կապահովվի թեմայի
ամբողջության յուրացումը, մի հանդամանք, վորը
լինելու յե ուսուցչի վերջնական նպատակը: Այս յերկու
մոմենտների (նոր նյութը և նախորդ դասերից վերց-
րածները) նշումով ուսուցիչն արդեն պարզած կլինի-
որվա դասի բովանդակությունը:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, վոր
առհամարակ նպատակահարձար ե տվյալ որվա դասի
նպատակն սկզբից շատ կարճ ձևով հայտնել աշակեր-
տությանը, վորպեսզի յերեխայի առանց այն ել ցրվե-
լու ընդունակ ուղաղը ությունը հենց սկզբից հնարա-
վոր լինի կենտրոնացնել հիմնական խնդրի վրա: Յերե-
խայի ուղաղը յունը ցրվելու մերևույթը կանխելու
նպատակով, իհարկե, ուսուցիչը պետք ե դիմի նաև այլ
միջոցների — անհրաժեշտ պայմաններ, մթնոլորտ
ստեղծի դասարանում: Սակայն դասի նպատակի ձևա-
կերպումը վհչ մի դեպքում չպետք ե հանդիսանա անց-

նելիք նկութի քիչ թե շատ համառոտ բովանդակությանը, դասի նպատակը պետք է կը ի խնդրի, պըորելեմի բնույթը, վորը պետք եւ սը ու մորվիղացիայի յենթարկի յերեխաների ուշադրությունն իր վրա:

Դ. ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Յերբ պարզված ու մշակված են դասի բովանդակությունը և նպատակը, պետք և անցնել հատկապես տվյալ դասին կիրառելիք մեթոդների խնդրի մշակմանը և դրանց ընտրությանը: Վոմանք կարծում են, թե յուրաքանչյուր ուսուցիչ ունի միայն մեկ մեթոդ, վորպիսին միշտ կիրառում և իր դասավանդման ընթացքում: Սա ճիշտ չե, անշուշտ ուսուցիչն ունենում է, և պետք եւ ունենա, իր մոտեցման հատուկ ձեր, մանկավարժական յուրահատուկ պրիոնները, սակայն սա իրավունք չի տալիս լենթաղբելու, թե իր նախընտրած մեթոդը պետք եւ դարձնել քարացած մի դրություն և դրանից առաջ ու լետ չպետք եւ գնալ. «Ոչչ մի մեթոդ չի կարող համարվել հիմնական, ունիվերսալ մեթոդ», — ասում եւ կենտկոմն իր հայտնի վորոշման մեջ:

Մեթոդների ընտրությամբ և գործադրման մեջ պետք եւ նկատի ունենալ, վոր ամեն մի ակադիմական ժամ ունի իր կոնկրետ նպատակը, վոր ավելի կամ պահաս չափով տարրերվում ե իր նախորդ և հաջորդ ժամերից, ուրեմն և պետք եւ լուրացանչյուր հիմնական թեմայի համապատասխան մոտեցում նախատեսվի: Մանկավարժական ամրորջ պրոցեսը պետք եւ տարվի «ուսուցչի դեկավարությամբ» և դասավանդման բաղմազան մեթոդների կիրառմամբ» (կենտկոմի վորոշու-

մից): Յելնելով այս տեսակետից՝ դասի նախապատրաստման մեջ կարեոր նշանակություն ե ստանում մեթոդի կամ մեթոդների ընտրությունը՝ կապված վերը հիշված պահանջների հետ, այսինքն պետք ե նշվի, թե ինչ մեթոդով կամ մեթոդներով պետք ե մշակվեն թեմայի առանձին մասերը:

Մեթոդների ընտրության ժամանակ անհրաժեշտ ե անպայման նկատի ունենալ նրա կիրառման ռեալ հնարավորությունները, այսինքն՝ անցնելիք նյութի առանձնահատկությունները, անհրաժեշտ դրականությունը, դիտողական նյութերը, գործիքները, լաբորատորական սարքավորումը, խմբի աշակերտության պատրաստության մակարդակը և այլն:

Դ. ԴԱՍԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՈՇԸՆԴԱԿ ՆՑՈՒԹԵՐՈՎ,
ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ

Ավելորդ չեր լինի ալստեղ շեշտել մի հանդամանք և առաջակա սատուցիչն առաջուց նախատեսում ե, թե դասի ընթացքում դիդակտիկական ինչ ոժանդակ նյութեր, ուսումնական ինչ պիտույքներ ե ոգտագործելու, սակայն մոռանում ե նախորդոք ձեռք բերել ալիք նյութերը. սրանց մասին հանկարծ հիշում ե դասի ընթացքում, ուստի ստիլված՝ յերեխաններին մեկ-մեկ ուղարկում ե դուրս՝ կազմին, քարտեղ, նկար, պլակատ, փորձանոթ և այլ նման իրեր բերելու. յերբեմն ել ինք՝ դասատուն ե դասի ժամանակ դուրս գննելմ, յերբ կարիք կ լինում ավելի ծանր կամ հեշտությամբ փշացող առարկա բերելու. Ալսպիսով դասի ընթացքում ստեղծվում ե կատարյալ զբոսանք:

Նման հակամանկավարժական և անտեղի կերպով

բապեներ խլող գրությունը կամ խելու նպատակով, ու-
սուցիչը նախ պետք ե դասի նախապատրաստման ժա-
մանակ նշի դասի ընթացքում ողտագործելիք բոլոր
նկառթերը և, չերկրորդ՝ դասից առաջ նա անպայման
պետք ե նախապատրաստի այդ ամենը՝ դասարանն
առաջուց ապահովելով անհրաժեշտ պարագաներով—
դիտողական պիտուղներ, նկարներ, գործիքներ, կա-
միճ, սրբիչ, թանաք և ալյու: Ակադեմիական ժամի ըռ-
պեները խնայելու նպատակով մենք նույն իսկ կա-
ռաջարկելինք տեսրերը բաժանել վհչ թե դասի ըն-
թացքում, այլ դասից առաջ, անշուշտ այն զեպքերում,
յերբ տվյալ դրավորի բացարության կարիքը չկա:
Մի խոսքով՝ ստեղծեն այսպիսի պայմաններ, վոր դա-
սին հատկացված վողջ ժամանակն սպառործվի ման-
կավարժական պրոցեսի համար:

Ե. ԴԱՍԻՆ ՀԱՆԵԼԻՔ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զափաղանց կարեոր ե նախատեսել թե ինչ յեզ-
րակացություններ պետք ե հանել տվյալ դասին. սրա-
նով կնշի այն նորը, վոր պետք ե տրվի տվյալ ժամին,
և վորով այդ որվա ակադեմիական ժամն իր բովան-
դակությամբ աարերինու լե մյուս ժամերից: Հաճախ
ե պատահում, յերբ դասի ընթացքը տարվում ե բա-
վական հետեղական, մշակվում են նախատեսված
բոլոր խնդիրները, սակայն մի հայտարարի չեն բեր-
վում նրանք, չեն ընդգծվում, թե՝ ուրեմն ի՞նչ իմացանք
այդ բայցից, և կամ հանվում են յերկրադական նշա-
նակություն ունեցող պատահական յեզրակացություն-
ներ՝ մոռացության մատնելով կարեռները: Այդպի-
սով դասն իր նպատակին լրիվ չափով չի հանում,

ուստի ուսուցիչն առաջուց իր մոտ հակիրճ կերպով
պետք ե նշած լինի դասի ընթացքում հանելիք յեղա-
բակացությունները:

Զ. ԱՌԱՋԱԿԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Դասի նախապատրաստման աշխատանքում հատուկ
տեղ պետք է տալ աշակերտության առաջադիմության
հաշվառման ձերին ու բովանդակությանը: Կենտկոմն իր
վրոշման մեջ հատկապես ընդգծում է աշակերտու-
թյան կողմից անցած նյութի յուրացման անհատական
և սիստեմատիկ հաշվառման անհրաժեշտությունը. «դա-
սատուն պետք է աշխատանքի պրոցեսում ուշի-ուշով
ուսումնասիրի յուրաքանչյուր աշակերտի»: Սրան զու-
գընթաց նշվում է ուսուցչի զեկավար դերի անպար-
հան ապահովման անհրաժեշտությունն ամբողջ ուսում-
նական աշխատանքի պրոցեսում:

Աշակերտության առաջադիմության հաշվառման
ունի այն նշանակությունը, վոր դրա միջոցով պար-
զելով աշակերտի ակտուեմիական դեմքը, նրա աշխա-
տանքի դրական և բացասական կողմերը՝ հնարավոր
կլինի միջոցներ ձեռք առնել նկատված բացերը վերաց-
նելու, աշակերտի նախաձեռնությունն ու ինքնազոր-
ծունեցությունը զարգացնելու և գրանցվ իսկ նպաս-
տելու աշակերտի աշխատանքի վորակի բարձրացմանը:
Հասկանալի է, վար այս ամենը պետք է կատարվի
ուսուցչի անմիջական զեկավարությամբ, նաև պետք է
ուսումնասիրի անհատապես յուրաքանչյուր աշակերտի
առանձին մոտեցում ունենալով զեպի նրանցից յու-
րաքանչյուրը:

Այս գործի կազմակերպման համար նույնիսկ նը-

պատակահարմար ե, վոր ուսուցիչը դասի նախապատե
րաստման ժամանակ մտածի, թե վոր աշակերտին -
ինչ մոտեցումով ե հարցնելու տվյալ դասին, վոր աշա-
կերտի վրա և նյութի հատկապես վոր մասում պետք
ե ավելի ծանրանա: Խոկ սրբա համար ուսուցիչը պետք
ե լավ ճանաչի իր աշակերտին: Դժվար չե այստեղից
հետեցնել, վոր հաշվառման աշխատանքները գերազան-
ցապես կապված են աշակերտության ուսումնասիրու-
թյան խնդրի հետ: Ուսուցիչը շարունակաբար պետք ե
ուսումնասիրի, թե ինչու այս կամ այն աշակերտը լեռ
մնաց իր ընկերներից, պետք ե պարզի, թե ինչպիսի
միջավայրում ե նա լինում դպրոցից դուրս, ինչ պայ-
մաններում ե նա գտնվում իր ընտանիքում և այլն:

Աշակերտության առաջադիմության հաշվառումը
մյուս կողմից ել հնարավորություն և տալիս պարզելու,
թե ինչ ռեալ հնարավորություններ կան ծրագիրն ամ-
բողջությամբ անցնելու համար, ըստ վորում ուսուցիչը,
հատուկ ուշադրություն դարձնելով ծրագրի թերի մնա-
ցած մասի և թույլ աշակերտների վրա՝ աշխատում և
լրիվ կատարել, հասցնել իր տարեկան պլանը:

Աշակերտության առաջադիմության ընթացիկ հաշ-
վառումը պետք ե տեղի ունենա մանկավարժական
պլրոցեսի ընթացքում, սակայն ուսուցիչն առաջուց,
դասի նախասպատրաստման ժամանակ պետք ե նա-
խառեան ընթացիկ հաշվառման կարկոր մոմենտները՝
ծրագրելով, թե ինչպիսի հաշվառում պետք ե կա-
տարել տվյալ նյութն անցնելիս, արդյունքներն ինչ-
պես են արտահաւաքելու — բանավոր, գրավոր, գործ-
ական աշխատանքներով, սխեմաներով, դիմումնե-
րով, կոլեկցիաներով և այլն (աշակերտության առա-

ջաղիմության հաշվառման մանրամասնությունները տես Հ. Փ. Կ. նախկի. ծրագրամեթոդիայանի մշակած մեթոդական նամակը):

Է. ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Դասի նախապատրաստման հետեյալ մոմենտը պետք է համարել տանը տրվելիք աշխատանքների նախատեսումը։ Սա կարևոր հանդասմանք է, վորովհետեվ առանց մանկավարժական հատուկ մոտեցման, տանը տրված աշխատանքը չափից ավելի կամ պակաս լինելու դեպքում անարդյունավետ կարող է լինել, յերբեմն նույնիսկ կարող է զնասել դորձին։

Տնային աշխատանքը պետք է նախատեսել հետեւվյալ հիմնական սկզբունքներով։


ա. տնային աշխատանքն անպայման պետք է համապատասխան լինի աշակերտության ուժերին։

բ. տնային աշխատանքը (աշխատանքը կատարելու համար պահանջվող ժամանակի տեսակետից) տալ համաձայն «Մասսայական դպրոցների ներքին կյանքի կարգավորման վերաբերյալ կանոնների» նը կատի ունենալով, վոր կարող են տնային աշխատանքներ լինել նաև մյուս առարկաներից։

գ.) տանը տալ ախպիսի աշխատանքներ, վորոնք կամրապնդեն և կխորացնեն դասարանում աշակերտի անցած դիտելիքը, հատկապես բարձր խմբերում անցնելով արգեն մշակված նյութից բղխող առաջադրությունների ինքնուրույն կատարման։

Ուսուցիչն այս յերեք հիմնական սկզբունքներով և նախատեսելու տանը տրվելիք աշխատանքը

Յերբ արդեն պատրաստ են դասի ընթացքի ամսող պատկերը, դասի բովանդակության ու նրա առանձին մոմենտները, այնուհետև անհրաժեշտ ե այդ ամենը զնել դասարանային ուժիմի տակ, այսինքն դասի լուրաքանչյուրը հիմնական մոմենտի համար նախատեսել համաղատասխան մոտավոր ժամանակամիջոց՝ տվյալ ակադեմիական ժամի ընթացքում։ Առանք կարող են կարծել, թե սա ավելորդ աշխատանք է, նույնիսկ անհնար ե կատարել քանի զոր հաճախ դասի ընթացքում կարիք ե զգացվում վարել մոմենտի վրա շատ ավելի կանգ առնել քան նախատեսված եր, կամ ընդհակառակը չենց նման յերեսույթներն ինքնին առաջուցում են, վոր դասի նախապատրաստան այս կամ այն անհրաժեշտ պահանջը լրիվ չի ուսումնասիրված ուսուցչի կողմից, կամ ուսուցիչն աշակերտության կարողության մասին չունի ճիշտ պատկերացում, կամ իր անցնելիք նյութի նախնական մշակումը կատարել ե թերի չենց դրա համար ել նախապատրաստումն անհրաժեշտ ե կատարել լրիվ և ուշադիր։ Մակայն կա և մի այլ հանգամանք յերբ դասի ընթացքում այս կամ այն խնդրի վերլուծումը չափաղանց աշխուժություն ե մտցնում դասարանում, սա լավ ե, իհարկե՛ սիշտ պետք ե աշխատել դասավանդման ամբողջ պրոցեսի մեջ հետաքրքրություն մտցնել սակայն յերբեմն պատահում ե, վոր այդ աշխուժությունը պատճառ ե դառնում, վոր թե դասատուն ե թե աշակերտությունը հեռանան, շեղվեն հիմնական խնդրից։ Ուսուցիչը տարվելով ալդ հետաքրքիր մոսեն-



տով՝ մի շաբք նախատեսութիւնը թողնում ե անկատար՝ մոռանալով միաժամանակ, վոր նա այդ որվա իր պլանը լրիվ չի կատարեր Ալստեղ ե ահա, վոր դասը մատնը- վում ե ինքնահոսի: Դասավանդման ընթացքում ու- սուցիչը պետք ե շարունակ կոնտրոլի յենթարկի իր որվա պլանի կատարումը՝ թնչը վերջացրեց և թնչը մնաց անելու. այս կոնտրոլի գործին գերազանցապես կնպաստի ամբողջ ակադեմիական ժամը բոլորների բաժանելը: Վոմանք կարող են առարկել թե վոչ բոլոր ուսուցիչները ժամացույց ունեն, իսկ ունե- ցած դեպքումն ել հակամանկավարժական ե դասի ըն- թացքում շարունակ ժամացույցին նայելը, ալդ շատ ճիշտ ե: Սակայն ինչու շարունակ ժամացույցին նայել, քանի վոր բոլորների նախատեսումը պետք ե լինի մո- տավորապես. կարեորն այն ե, վոր պահպանված լինեն տվյալ դասի համար նախատեսված բոլոր ետապները՝ նրանց հատկացված մոտավոր ժամկետներով:

Վերը նշված բոլոր մոմենտներից բացի, չափազանց կարեռը ե նաև ուսուցչի կեցվածքը դասարանում—նրա ձայնը, շարժումները, աշակերտության հնատ վարվելու ձևերը և այլն: Սրանց վրա ես պետք ե հատուկ ու- շադրություն դարձնել:

Որվա դասը հաջող պլանավորելու համար անհրա- ժեշտ ե, վոր ուսուցչի պատրաստվի հատկապես տվյալ որն անցնելիք նյութը լուրացնելու տեսակետից: Նա պետք ե նախորոք լավ ծանոթանա նյութին, լուրաց- նի այն, ձեռք բերի համապատասխան գրականություն, ճշտի թվերը, այլև ստուգի այն փորձանոթներն ու գործիքները, վորոնք պետք ե ոգտագործի դասի ըն- թացքում: Ուսուցիչը պետք ե անցնելիք նյութն

իր բոլոր կողմերով նախնական մշակման յինթարկի, ալլապես չի կարող տանը հաջող պլանավորել:

Թ. ԲՆԴՀԱՆՈՒԹ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարտադիր չե, վոր մեր թված բոլոր մոմենտներն անպայման ամեն որ և նույնությամբ տեղ գտնեն դասի նախապատրաստման աշխատանքներում, որինակ՝ յեթե նախատեսվում ե հաջորդ որվա դասն ամբողջովին տրամադրել կրկնությանը՝ բնականաբար մեր նշած մոմենտներից մի քանիսը կարող են կամ հանգիւ, կամ իրենց հաջորդականությունը փոխեր Յեզ կամ՝ յեթե չի նախատեսվում—տնային աշխատանքուալ (որինակ՝ հանգստի նախորդ որերին), ինչ խոսք, վոր այս կետը նման դեպքերում չի մտնի որվա պլանի մեջ:

Մի այլ կարեոր հանդամանք ևս արժե նկատի ունենալ Առհասարակ շատ չպետք ե ծանրաբեռնել դասի ողանք. վերջինս այնպես պետք ե կազմել վոր նրա լրիդ կատարումն անպայման ապահովված լինի: Որվա պլանի ծանրաբեռնումը գործին անպայման վնաս կհասցնի: Հասկանալի յե, վոր հակառակը ևս՝ շափից պակաս ընդունավորումը ևս կլինասի:

Մի այլ դիտողություն ևս.—կարիք չկա որվա գրավոր պլան մշակելու համար սխեմաննը կազմել, վերնազրերով սյունակներ գծել և այլն: Նման դեպքերում շտամպովկայի վտանգն ավելի ակնահայտ կլինի. ուսուցիչն ավելի շուտ կաշխատի մեխանիկորեն լրացնել սյունակները, քան թե խորանալ դասի լուրջ նախապատրաստման, նրա պլանավորման ներքին բովանդակության մեջ: Ուստի նպատակահարմար ե պլանը

կազմել աղատ՝ առանց սահմանագծումների, տեսրի
մաքուր յերեսին:

7. ԹՐՎԱ ՊԼԱՆԻ ՈՐԻՆԱԿՆԵՐ

Դասի նախապատրաստման պատկերն ավելի պար-
զելու նպատակով բերենք յերկու որինակ՝ իրար հա-
ջորդող յերկու որերի դասերի պլաններ:

Վերթնենք որինակ Գ. դասարանի հայոց լեզվի
պլանը:

ՓԵՏՐՎԱՐԻ 15

Ծանոթություն,—Անցնում են «Գիքորը». նախորդ դա-
սին կարդացել են ամբողջ հոդվածը:

1. Դասի նպատակը

ա. դասի ընթերցում և պատմել,

բ. քերականությունից ստորակետի մասին
մի փոքր ավելի խորացված բացատրություն և հատ-
կապես նրա գործածությունը թվարկման ժամանակ:

Նախորդ դասից կրկնել վերջակետի գործածու-
թյունը:

ԳՈՐԾԱԴՐՎԵԼԻ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԶԵՎԵԲԸՆ

ա. ուսուցչի ընթերցում.

բ. լավ և գիտակցորեն կարդացող աշակերտ-
ների ընթերցում, վորից հետո մյուսների
ընթերցում:

Այսուհետեւ հողվածը գեղարվեստորեն պատ-
մել տալ մի քանի հոգու—սկզբում իրար
շարունակելով, վերջում ամբողջացած ձե-
վով: Այն հաշվով, վոր ընդամենը պատմվի
յերեք անգամ:

3. ԱԺԱՆԴԱԿ ՊԻՏՈՒԹՅՆԵՐ ԴԻԴԱԿՏԻԿԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Դասագրքից և տետրից բացի, ողտագործել
նաև «Մեր գյուղը» և «Քաղաք» պլակատները:

4. Դասի ընթացքում հանելիք յեզրակացություններ

ա. Համբոն Գիքորին բերեց քաղաք և աշ-
կերտության ավեց իրենց չքավորության
պատճառով։

բ. մեզ մոտ չքավորության պատճառով յե-
րեխաներին չեն բերում քաղաք, վորովիե-
տել կոլխոզներում բարձրանում ե պլուղա-
տնտեսությունը։

գ. Ենրականություննից—թգարկման ժամանակ
դնում ենք ստորակետ։

Տնային աշխատանք

ա. Կարդալ «Գիքորը» 3—5անգամ

բ. սովորել լավ պատմել «Գիքորը»։

գ. տետրերում զրել յերկու նախադասու-
թյուն, վորոնց մեջ լինի թվարկում։

Ընթերցմանը տրամադրել 15 բովե, պատմելուն՝
15 բովե, քերականությանը՝ 10 բովե, գրավոր աշխա-
տանքին՝ 10 բովե։

ՓԵՏՐՎԱՄԻ 16

1. Դասի նպատակը

ա. Կատարել սացիոլոգիական պարզ վեր-
լուծություն,

բ. քերականություննից ստորակետի գործա-

ծությունը «վոր»-ից, «վորպեսզի»-ից և «վորովհետև»-ից առաջ:

գ. Դաստիանական գրավոր

Տանը գրված նախադասությունների ստուգում: Դաստիանում գրել տալ յերկու նախադասություն ստորակետի գործածությամբ - թվարկման դեպք և «վորպեսզի» բառից առաջ («կոլլոգում» ընդունվեցին Գևորգը, Մարկոսը, Սուրենը). «Խաչիկն ընդունվեց լիկակայան, վորպեսզի գրագետ գտնանա»):

Դորձադրված մերողներն ու ձեվերը

ա) հարց ու պատասխան.

բ) աշխատանք գրքով.

Ոժանդակ պիտույքներ

ոգտագործել նախորդ դասին ոգտագործածը:

Դասի ընթացքում նանելիք յեզրակացուրյուններ

ա. ըուրժուաների յերկրում չօտավորների յերեխաները սոսկալի շահագործվում են:
բ. մեղ մոտ յերեխան չի շահագործվում: Յերեխաներին պաշտպանում են պրոլետարական պետությունը, պիտներական կազմակերպությունը և «Յերեխաների ըարեկաների ընկերությունը»:

Այստեղից՝

կապ նախորդ դասին համած յեղրակացության հետ, այն ե՝

դ. Յուրժուական սղալմաններում Գիքորին
ստիպված բերին քաղաք և տվին աշխերտու-
թյան։ Մեզ ձուռ «Գիքոր»-ներ չկան։
Քերականությունից— «Վոր»-ից, «Վորպես-
դի»-ից, «Վորովինետե»-ից առաջ գրվում ե
ստորակետ։

Տնային աշխատանք

ա. Դպրոցի գրադարանից վերցնել «Գիքորը»
լրիվ որինակը և կարդալ (սա պահանջնել
մինչև մարտի 1-ը)։

բ Տետրերում կարճ գրել, թե ինչու հայրը
Գիքորին բերեց քաղաք։

Պատմելուն արամագրել 15 ըստե, սոց. վերլուծ-
մանը՝ 15 ըստե, քերականությանը՝ 10 ըստե, գրավոր
աշխատանքին՝ 10 ըստե։

Վորպես որինակ տալիս ենք նաև Բ. գասարանի
ժամանակատիկայի դասի պլանը. ²⁰/IX-ի 1934 թ.

Դասի նյութը.—յերկնիշ և միանիշ թվերի դումա-
րումը։

Նոլտակը.—Յուրացնել յերկնիշ և միանիշ թվերի
դումարման այն դեպքերը, յերբ միավորների գու-
մարը դասից տվելանում է։

Կապը նախկին դասի ներ.—Յերեք որինակ գումարման
այն դեպքերից, յերբ յերկնիշ թվերի և միանիշ թվե-
րի գումարը 10-ից չի ավելանում. 45+3, 52+7,
61+6, 5+6, 7+5, 8+6 (բանագոր)

Ժամանակի բաւարարությունը.՝ կրկնությունը՝ 4—5 բա-

պե, նոր դասին — բանավորին՝ 27 ըռպե, պրավորին՝
18 ըռպե.

5. Գործադրված մերսղներ. — Զննական և հարց ու
պատասխան:

Ոժանդակ պարագաներ. — լուցկիներ և փայտի
ձողիկներ (տասնյակներով և հատերով), համբիչ
թվաբանական արկղ:

7. Նոր դաս. — 10 վարժություն (կոնկրետ իրերով,
լուցկիներով) դասադրքից Ա... Եջ..., 10—12 վարժու-
թյուն գրատախտակի վրա — Ա... Եջ..

8. Գրավոր դասարանում. — 8 վարժություն (նախո-
րոք կազմված կամ դասադրքից):

Տնային աշխատանիք. — 8 վարժություն խնդրագրքից.
Եջ... Ա...

Առաջարկագրության դ. դասարանի դասի պլանը

13 ՆՈՅԵՄԲԵՐ

Դասի նպատակը. — լուրացնել տալ հետեւյալ գիտե-
լիքները.

ա. Ղրիմի հարավային ծովափը՝ ԽՍՀՄ մերձ-
արևադարձային կլիմա ունեցող շրջան.

բ. Ղրիմի հարավային ծովափի բուսականությունը,
կենդանիները, բնակչությունը.

դ. Կոլտնտեսական շարժումը Ղրիմում.

դ. Ղրիմը ԽՍՀՄ-ի բուժագայք:

Վերեիշել՝ վորոնք են մերձարևադային յերկր-
ները

Գործադրվող մերսղներն ու ձեվերը: Իլյուստրատիվ.
քարտեզի (Ղրիմ) մանրամասն ուսումնասիրություն:

Աժանդակ պիտույքներ.—քարտեզ, գլոբուս, նկարներ
Նրիմի տեսարաններից (գլխավորապես մերձարևա-
դարձային բուսականությունից)։

Հանելիք յեղակացաւրյուններ.—Նրիմում կոլտնտե-
սությունները դարձել են տիրապետող։

Նրիմը համարվում է ԽՍՀՄ-ի կարևոր բուժավայրը։
Նրիմի կուրորտներից առաջ ոգտվում են կապի-
ասիստներն ու շահագործող տարբերը, իսկ այժմ
ոգտվում են բանվորներն ու աշխատավոր գյուղացի-
ները։

Տնային տեխնտանելու գծերը։—Գծել Նրիմի քարտեզը։
Փամանակի բաժխում։—Ֆիզիկական և քաղաքա-
կան աեսություններին 20-ական ըոսկե, ամփոփմանը՝
10 ըոսկե։

Նախքան պլանների բացարականուվերլուծական
աշխատանքին անցնելը, անհրաժեշտ ենք համարվում
ընդունել ուշադրության արժանի յերկու հանգամանք։

ա. Դասի պլանները խնամքով ու բարեխնդորեն
կազմելու գեղքում շարլոն չի ստեղծվի։ տարբեր որե-
րի գասերի պլաններն իրար նման չեն դառնա։ Ենց
դրա համար ել մենք դիտմամբ միաժամանակ վերցրինք
իրար հաջորդող յերկու որերի պլաններ (հայոց լ.)։

բ. Պլանավորված դասին, հետևողականորեն այդ
պլանը կատարելու դեպքում, ժամանակն անտեղի չի
կորչի. ավելին կասենք՝ այն, վոր հաղիկ և բագականա-
նում 45 կամ 50 րոպեանոց ակադեմիական ժամը, մինչ-
դեռ քիչ չեն այն դեպքերը, յերբ դասը պլանավորված ու
կանոնավոր չլինելու պատճառով ուսուցիչը «սպառում
ե» իր նյութը, «ավարտում» իր անելիքը դեռ ես դասը

վերջանալուց բավական առաջ ու պատեսատ ընկնելով շինծու հարցեր ստեղծելով՝ անհամբեր սպառում, թե յերբ և վերջանալու դասը:

Այժմ անցնենք վերը մեր առաջադրած ողանների վերլուծությանը՝ կամ, ազելի ճիշտ՝ նրանց մի քանի խնդիրների պարզաբանմանը:

ԳԱԱՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ

(ইঙ্গীয় লেখাপত্ৰ)

Առաջին պլանի նպատակներից մեկն առողջանությամբ կարդալն եւ Հասկանալի յի, վոր առողջանությամբ լավ կարդալու առաջին որինակն ինքը՝ ուսուցիչը կարող է լինել. ուստի և մեթոդների մեջ հիշատակվում ե ուսուցչի ընթերցումը, վորին արգեն կարող են աշակերտները նմանեցնել իրենց ընթերցումը, իսկ աշակերտներից առաջին հերթին պետք է կարգալ տալ անսխալ և վարժ կարդացողներին։ Ի՞նչ խոսք, վոր ուսուցիչը շարունակ՝ միննույն աշակերտին չպետք է նկատի ունենա վորպես առաջին ընթերցող, վորովհեակ այդ կերպ տվյալ աշակերտը դասարանում կդառնա արտօնյալ ընթերցող, սա մանկավարժորեն սխալ է. ուսուցիչը պետք է շարունակաբար փոփոխի առաջին ընթերցողին։

Յերկրաբանական գիտարվեստորեն պատմենք և

Սովորաբար լեռը վորեկ նյութ առաջին անգամ
պետք է պատճի աշակերտության կողմից, մանավանդ
ցածր դասարանում՝ ուսման առաջին տարիներում,
ուսուցիչը պետք է զեկավարողի զերում լինի, նա
պետք է կարողանա մտքերի տրամարանական հաջոր

Պականություն ստեղծել աշակերտության մեջ։ Դրա
համար ել նա տալիս և առանձին, սակայն հետևողա-
կան ուղնցուց հարցեր, աշակերտները պատասխանում
են այդ հարցերին, վորից հետո արդեն կարելի յէ ամ-
րող նլութը պատմել տալ առանց ուսուցչի ոգնու-
թյան։

Այս մոտեցման համապատասխան ել վերցված են
դրժառքավելիք մեթոդները։

Բն առազանությունը կարգալու և թե մանավանդ
պատճենը, հետ սերտորեն կապված և նյութի սոցիալո-
գիական պարզ վերլուծումը։


Յերականության կապակցությամբ կետադրության
խնդրի դրվածքը մեր բնրած պահներում համարելով
պարզ՝ ամելացնելով ենք համարդամ որա վրա առանձնա-
պես կանոն տանելը Ընդունենք միայն մի հանդամանք,
վոր ստորակետի գործածությունը թվարկման դեպ-
քում, «վոր», «վորովհետեւ», «վորովհովի»-ից առաջ
այսելի յուրացնել տալու նպատակով անհրաժեշտ ենք
համարել, վոր յերեխան դաստիանում կամ տնային
աշխատանքում ինքը մտածի և կազմի համապա-
տասխան նախադասություններ, վորի համար, վոր-
ուիս այլ բովանդակությամբ կետադրության նշան,
նախորդ գասից կրկնել ենք տալիս վերջակետի գոր-
ծածության մի քանի դեպք։

Քանի վոր տնային աշխատանքի հիմնական նույ-
տության և ավելի յուրացնելու խորացնել տալ գաստ-
րանում անցածը, ուստի ավելալ գելքառմ բնականաբար
պիտք և հանձնաբարել տանը պատմել սովորել վո-
րովհետեւ դաստիանում առազանությամբ կարդացնելով՝
նյութի բովանդակությունն արդեն նրանց ծանօթ և,

մնում ե, վոր իրենք այդ բովանդակությունն ավելի
մարսն ինքնուրուցին պատճելու միջոցով:

Աշակերտաների առաջադիմության հաշվառման վե-
րաբերյալ մենք շատ համառոտ ենք զրես քանի վոր
այդ մասին հրատարակված և հատուկ մեթոդական
նամակը՝ Հիշեցնենք միայն, վոր առանձին աշակերտ-
ների առաջադիմության հաշվառման ու անհրաժեշտ
գիտողությունները պետք և զրել որամատրանում
կամ ծոցառետրում:

Բավականանք միայն այս յերկու պլանների
վերլուծմամբ, մյուս պլաններին ևս պետք է մոտենալ
նույն սկզբունքներով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳԱԱ Հիմնարար գիլ. գրադ.



FL0039900

[064]

ԳԻՒԸ ՅՈ ԿՈՊ

A 1
4449

У т и к

Как подготовиться к уроку

Гиз ССР Армения, Эривань